ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ) **(փաստաթղթային կոդ՝ Կ-771-27.10.2020-ՊԻ-011/1),** որով առաջարկվում է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում՝ նպատակ հետապնդելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակությունն ու ռազմական հզորությունը վտանգի ենթարկող մի շարք հանցագործությունների դեպքում առավել համաչափ պատիժներ նախատեսելու՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ նաև քրեական օրենքի պրևենտիվ գործառույթի ազդեցությունն էապես բարձրացնելու համար:

Նախագիծը մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում: Նախագիծը ենթարկվել է ***իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության***:

Ստորև ներկայացվում են մասնագիտական փորձաքննության եզրակացությունները, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-771-27.10.2020-ՊԻ-011/1) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) իրավական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժնում:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի (հիմք՝ Ազգային ժողովի պաշտոնական կայքում հրապարակված Նախագիծը) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքների պահանջներին համապատասխանության վերաբերյալ նշենք հետևյալը.

1. Նախագծի 4-րդ հոդվածի մասեր հանդիսացող պարբերություններն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերը՝ *օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, հոդվածների մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:*

2. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 327^5-րդ հոդվածի 2-րդ մասում *«մեկից երեք»* բառերը փոխարինվում են *«երկուսից վեց»* բառերով: Միաժամանակ՝ Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով Օրենսգրքի 327^5-րդ հոդվածի 1-ին մասում *«պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ <u>առավելագույնը մեկ տարի ժամկետով</u>»* բառերը փոխարինվում են *«պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ <u>առավելագույնը երեք տարի ժամկետով</u>»* բառերով: Արդյունքում՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրած անձի կողմից պատժից ազատվելու պահից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

ժամկետում առանց հարգելի պատճառների՝ պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու նպատակով հաշվառման կամ փաստացի բնակության վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալուց խուսափելու համար ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետ նախատեսվում է երեք տարին, միաժամանակ արարքը ծանրացնող հանգամանքի առկայության դեպքում, այն է՝ արարքը, որը *կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում,* նախատեսվում է ազատազրկման ձևով պատիժ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենսգրքի 327[5]-րդ հոդվածի 2-րդ մասում ազատազրկում պատժատեսակի համար ստորին սահման սահմանել երեք տարին՝ այլապես կարող է ստեղծվել իրավիճակ, երբ որակյալ հանցակազմի դեպքում նշանակվող պատիժը ավելի մեղմ կլինի նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար նշանակված պատժից:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 71-րդ հոդվածի համաձայն՝ *օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:*

Նախագծով՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում կատարվող փոփոխությունների վերաբերյալ Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ նշվում է հետևյալը.

«2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: Սահմանադրությամբ ամրագրված այս պարտականության չկատարումը վնասում է զինված ուժերի նորմալ կոմպլեկտավորմանը, զինվորական ծառայության շահերին, ինչպես նաև պետության պաշտպանունակությանը:

Կարևորելով նշված պարտականության պատշաճ կատարումը և չկատարման արդյունքում վրա հասնող բացասական հետեւանքների կանխումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելու համար: (…):

Սահմանադրական վերը նշված պարտականության լույսի ներքո ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված են նաև այլընտրանքային աշխատանքային ծառայողների կողմից կատարվող հանցագործությունները (327[1] -327[4]-րդ հոդվածներ):

(…)

*2. ՀՀ քրեական օրենսգրքի **12-րդ բաժինը նվիրված է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններին՝ ընդգրկելով համանման անվանումով գլուխ**:*

Նշված բաժնում ընդգրկված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են. դրանք այն հասարակական հարաբերություններ են, որոնք առաջանում են զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի իրականացման ընթացքում:

(…)

*3. Հիմքում ունենալով **նշված խումբ հանցագործությունների հանրային բարձր վտանգավորությունը**՝ օրենսդիրը դրանց համար, որպես կանոն, <u>ծանրացնող հանգամանք է սահմանել արարքը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարելը</u>:*

Քրեաիրավական պատասխանատվություն նախատեսելուն զուգահեռ, հարկ է հաշվի առնել, որ արդարադատությունն իրականացնելիս դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն է այն, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին և բնույթին:

*Ըստ այդմ՝ <u>հատկապես ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարվող հանցագործությունների համար սահմանված սանկցիաները պետք է առավել համապատասխանեցվեն **համաչափության սկզբունքին**</u>:*

(…)

*Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ քրեական օրենսգրքի նշված հանցագործությունների համար նախատեսված պատիժների **<u>համակարգային</u>** ուսումնասիրությունը, ինչպես նաև **ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում նշված հանցագործությունների կատարման հանրային ծայրահեղ բարձր վտանգավորությունը** և դրանց կատարմամբ ՀՀ զինված ուժերի մարտունակությունն ու ռազմական հզորությունը վտանգի ենթարկելու սպառնալիքը՝ անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի <u>327-րդ, 327[1]-րդ, 327[5]-327[6]-րդ, 328-րդ, 356-րդ, 361-րդ և 362-րդ հոդվածով</u> նախատեսված այն արարքների համար, որոնք կատարվել են <u>ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում</u>, նախատեսել **առավել համաչափ պատիժներ**:(…)»:*

- Նախագծի 3-րդ հոդվածով փոփոխություն է նախատեսվում Օրենսգրքի 327[2]-րդ հոդվածում, որի արդյունքում ռազմական դրության, պատերազմի ժամանակ այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից **վերջնականապես** խուսափելու նպատակով ծառայության վայրն ինքնակամ թողնելու, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալու համար նախատեսվում է պատիժ ազատազրկում՝

ութից տասնհինգ տարի՝ վեցից տասներկու տարվա փոխարեն: Սակայն, հարկ է նկատել, որ Օրենսգրքի 327[3]-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսվում այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից իրեն որևէ վնասվածք պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության այլ միջոցով կամ ապօրինի այլ եղանակով ծառայության պարտականությունները կատարելուց **ժամանակավորապես** խուսափելու համար, նույն հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում նույն արարքի համար, որը կատարվել է այլընտրանքային աշխատանքային ծառայության պարտականությունները կրելուց **վերջնականապես ազատվելու նպատակով,** իսկ Օրենսգրքի 327[3]-րդ հոդվածի 3-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները <u>ռազմական դրության, պատերազմի ժամանակ կատարելու համար</u>, որի համար նախատեսվում է պատիժ ազատազրկում՝ **հինգից տասը** տարի ժամկետով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ արտահայտված դիրքորոշումները՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 327[2]-րդ հոդվածի 3-րդ մասում սանկցիայի փոփոխություն կատարելիս միաժամանակ Օրենսգրքի 327[3]-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված սանկցիան փոփոխության չենթարկելը *խնդրահարույց է պատժի համաչափության սկզբունքի տեսանկյունից:*

- Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվում Օրենսգրքի՝ *հրամանը չկատարելուն վերաբերող* 356-րդ հոդվածի 3-րդ մասը: Կարծում ենք, որ նպատակահարմար է վերանայել նաև Օրենսգրքի՝ *պետին դիմադրելուն կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն հարկադրելուն վերաբերող* 357-րդ հոդվածի 4-րդ և *պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելուն կամ դրանք կատարելու սպառնալիքին վերաբերող* 358-րդ հոդվածի 5-րդ մասերը՝ հիմք ընդունելով Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ կատարված դիտարկումները:
- Նախագծի 8-րդ և 9-րդ հոդվածներով փոփոխություններ են կատարվում Օրենսգրքի համապատասխանաբար *զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելուն վերաերող* 361-րդ հոդվածի 7-րդ մասում և *դասալքությանը վերաբերող* 362-րդ հոդվածի 3-րդ մասում: Նախագծի 8-րդ հոդվածով Օրենսգրքի 361-րդ հոդվածի 7-րդ մասում կատարվող փոփոխության արդյունքում <u>ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում</u>՝ երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ առանց

հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալու համար, ինչպես նաև մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից **ժամանակավորապես խուսափելու** նպատակով ինքնակամ բացակայության համար նախատեսվում է պատիժ՝ ազատազրկում՝ **վեցից տասներկու** տարի: Նախագծի 9-րդ հոդվածով Օրենսգրքի 362-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվող փոփոխության արդյունքում ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում դասալքության՝ զինվորական ծառայությունից **վերջնականապես խուսափելու նպատակով** զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալու համար նախատեսվում է պատիժ՝ ազատազրկում՝ **ութից տասնհինգ** տարի:

Հարկ է նկատել, որ քննարկվող հոդվածներում փոփոխություններ կատարելուն, այն է՝ համապատասխան մասերում սանկցիաները խստացնելուն զուգահեռ Օրենսգրքի *անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելուն վերաբերող* 363-րդ հոդվածում որևէ փոփոխություն չի կատարվում.

«1. Զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

(…)

3. Զինծառայողի կողմից հիվանդության սիմուլյացիան կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելը կամ խաբեությունը, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ***ժամանակավորապես*** *դադարեցնելուն՝*

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ***զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով՝***

պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

5. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ***ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝***

պատժվում են ազատազրկմամբ՝ ***հինգից տասը*** *տարի ժամկետով:»:*

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով Նախագծին կից ներկայացված հիմնավորմամաբ արտահայտված դիրքորոշումները՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 361-րդ և 362-րդ հոդվածների համապատասխանաբար 7-րդ և 3-րդ մասերում սանկցիայի փոփոխություններ կատարելիս միաժամանակ Օրենսգիրք 363-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված սանկցիան փոփոխության չենթարկելը *խնդրահարույց է պատժի համաչափության սկզբունքի տեսանկյունից*:

4. Նախագծի 5-րդ հոդվածում *«327⁶»* թիվն առաջարկում ենք փոխարինել *«327.6»* թվով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ Նախագծի 5-րդ հոդվածով փոփոխության ենթարկվող հոդվածի համարի գրելաձևը:

Նախագծի վերաբերյալ այլ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածների *միայն* մի մասում սանկցիաների փոփոխություն կատարելը խնդրահարույց է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 71-րդ հոդվածի տեսանկյունից:

Միաժամանակ, անհրաժեշտ է ներկայացված առաջարկությունների հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարող՝ Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)

28.10.2020թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարող՝ Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)

28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-771-27.10.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնում:

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

1. Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:
2. Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չի զգում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարող՝ Գ. Կիրակոսյան (հեռ.՝ 011 513-603)

28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-771-27.10.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժնում:

Սոցիալական փորձաքննության արդյունքները

1. Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական բնույթի հիմնախնդիրներ չի պարունակում:

3. Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալ, կրթական և առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չի զգում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235)
28.10.2020թ.